	ավիացիոն անվտանգության մասով հրահանգիչների սերտիֆիկատ տալու համար	բազային տուրքի 15-ապատիկի չափով
	թռիչքային անձնակազմի անդամների թռիչքային անցագրեր տալու համար	բազային տուրքի 10-ապատիկի չափով
	ավիացիոն անվտանգության մասով զննող օպերատորների քննության համար	բազային տուրքի 15-ապատիկի չափով
	ավիացիոն անվտանգության մասով զննող օպերատորների սերտիֆիկատ տալու համար	բազային տուրքի 15-ապատիկի չափով
ժ.	Ավիացիոն անվտանգության ուսումնական ծրագրերի հաստատում	
	օդանավակայանների ավիացիոն անվտանգության ուսումնական ծրագրերի հաստատում	բազային տուրքի 30-ապատիկի չափով
	ավիացիոն գործունեություն իրականացնող կազմակերպությունների ավիացիոն անվտանգության ուսումնական ծրագրերի հաստատում	բազային տուրքի 30-ապատիկի չափով
Ց)	Վտանգավոր համարվող բեռների օդային փոխադրման, վտանգավոր բեռների սպասարկման աշխատանքներ իրականացնող կազմակերպություններին և վտանգավոր բեռների օդային փոխադրումներն սպասարկող կազմակերպություններին թույլտվությունների տրամադրման համար	
ա.	օդանավ շահագործող կազմակերպություններին վտանգավոր համարվող բեռների օդային փոխադրման թույլտվության	բազային տուրքի 50-ապատիկի չափով

	տրամադրման համար	
բ.	վտանգավոր բեռների սպասարկման աշխատանքներ իրականացնող կազմակերպություններին թույլտվությունների տրամադրման համար	բազային տուրքի 50-ապատիկի չափով
գ.	վտանգավոր բեռների օդային փոխադրումներն սպասարկող կազմակերպություններին թույլտվությունների տրամադրում	բազային տուրքի 50-ապատիկի չափով
դ.	վտանգավոր բեռների սպասարկման աշխատանքներ իրականացնող կազմակերպության թույլտվության գործողության ժամկետի երկարաձգման համար	բազային տուրքի 50-ապատիկի չափով
ե.	վտանգավոր բեռների փոխադրման սահմանված կարգից ազատման համար	բազային տուրքի 50-ապատիկի չափով
9)	Օդանավի պետական գրանցման և թռիչքային պիտանիության պահպանման համար	
ա.	Օդանավի պետական գրանցման համար (ներառյալ օդանավի աղմուկի վկայականի տրամադրումը)	
	5700 կգ և ավել կամ 19 ուղևորից ավելի օդանավերի դեպքում	բազային տուրքի 100-ապատիկի չափով
	մինչև 5700 կգ կամ 19 ուղևորից պակաս օդանավերի դեպքում	բազային տուրքի 25-ապատիկի չափով
	օդանավի ապագրանցման համար	բազային տուրքի 100-ապատիկի չափով
բ.	Օդանավի պիտանիության արտահանման վկայականներ (սերտիֆիկատներ) տալու համար	
	5700 կգ և ավել կամ 19 ուղևորից ավելի օդանավերի դեպքում	բազային տուրքի 100-ապատիկի չափով
	մինչև 5700 կգ կամ 19 ուղևորից պակաս օդանավերի դեպքում	բազային տուրքի 60-

		ապատիկի չափով
գ.	օդանավի գրանցման սերտիֆիկատի փոխարինման համար	բազային տուրքի 50-ապատիկի չափով
դ.	օդանավի գրանցման սերտիֆիկատի կրկնագրի տրման համար	բազային տուրքի 20-ապատիկի չափով
ե.	Օդանավի թռիչքային պիտանիության սերտիֆիկատի տրամադրման համար (ներառյալ օդանավի ռադիոկայանի վկայականի տրամադրումը)	
	5700 կգ և ավել կամ 19 ուղևորից ավելի օդանավերի դեպքում	բազային տուրքի 150-ապատիկի չափով
	մինչև 5700 կգ կամ 19 ուղևորից պակաս օդանավերի դեպքում	բազային տուրքի 80-ապատիկի չափով
զ.	Օդանավի թռիչքային պիտանիության սերտիֆիկատի գործողության ժամկետը երկարաձգման համար	
	5700 կգ և ավել կամ 19 ուղևորից ավելի օդանավերի դեպքում	բազային տուրքի 100-ապատիկի չափով
	մինչև 5700 կգ կամ 19 ուղևորից պակաս օդանավերի դեպքում	բազային տուրքի 60-ապատիկի չափով
է.	աերոնավտիկական արտադրատեսակների ռետուրսների երկարաձգման վերաբերյալ եզրակացության տրամադրում	բազային տուրքի 10-ապատիկի չափով
ը.	օդանավի թռիչքի թույլտվության տրամադրման համար	բազային տուրքի 30-ապատիկի չափով
թ.	օդանավի թռիչքային պիտանիության պահպանման կազմակերպության (Փարտ-Մ) սերտիֆիկատ տալու համար	բազային տուրքի 160-ապատիկի չափով
ժ.	Օդանավի տեխնիկական սպասարկման մասնագետի վկայագրում	

	օդանավի տեխնիկական սպասարկման մասնագետի վկայագրման (ՓԱՐՏ-66) հայտի համար	բազային տուրքի 12-ապատիկի չափով
	օդանավի տեխնիկական սպասարկման մասնագետի վկայական (ՓԱՐՏ-66) տալու համար	բազային տուրքի 12-ապատիկի չափով
	օդանավի տեխնիկական սպասարկման մասնագետի վկայականի գործողության ժամկետի երկարաձգման համար	բազային տուրքի 7-ապատիկի չափով
	օդանավի տեխնիկական սպասարկման մասնագետի վկայականի կրկնօրինակ տրամադրելու համար	բազային տուրքի 9-ապատիկի չափով
	օդանավի տեխնիկական սպասարկման մասնագետի վկայականում համապատասխան որակավորման վերաբերյալ նշումներ կատարելու համար	բազային տուրքի 5-ապատիկի չափով
	օտարերկրա օդանավի տեխնիկական սպասարկման մասնագետի վկայականի ճանաչման համար	բազային տուրքի 10-ապատիկի չափով
ժա.	Օդանավի տեխնիկական սպասարկման կազմակերպության սերտիֆիկացում	
	օդանավի տեխնիկական սպասարկման կազմակերպության սերտիֆիկատի (Փարտ-145) տրամադրման համար	բազային տուրքի 120-ապատիկի չափով
	օդանավի տեխնիկական սպասարկման կազմակերպության սերտիֆիկատի (Փարտ-145) փոփոխության համար	բազային տուրքի 50-ապատիկի չափով
	օտարերկրյա տեխնիկական սպասարկման կազմակերպության սերտիֆիկատի (Փարտ-145) ճանաչման համար	բազային տուրքի 200-ապատիկի չափով
10)	Ավիացիոն ուսումնական հաստատությունների կազմակերպությունների հաստատում կամ ճանաչում	
ա.	ավիացիոն ուսումնական հաստատությունների կազմակերպությունների ————— համապատասխանության ուսումնասիրության և վկայականի սերտիֆիկատի տրամադրման	բազային տուրքի 600-ապատիկի չափով

	համար	
բ.	հաստատված ավիացիոն ուսումնական հաստատության <u>կազմակերպության</u> ձեռնարկի (Approved Training Organization Manual) փոփոխության ուսումնասիրության և հաստատման համար	բազային տուրքի 300-ապատիկի չափով
գ.	ավիացիոն ուսումնական ծրագրի հաստատման կամ փոփոխությունների կատարման համար	բազային տուրքի 200-ապատիկի չափով
դ.	ուսումնական թռիչքային վարժասարքի հաստատման համար	բազային տուրքի 50-ապատիկի չափով
ե.	ուսումնական թռիչքային վարժասարքի ճանաչման համար	բազային տուրքի 100-ապատիկի չափով
զ.	հաստատված կամ ճանաչված ուսումնական թռիչքային վարժասարքի պահպանության համար՝ տարեկան	բազային տուրքի 50-ապատիկի չափով
է.	հաստատված ավիացիոն ուսումնական հաստատության <u>կազմակերպության</u> վկայականի <u>սերտիֆիկատի</u> տարեկան պահպանության համար՝ տարեկան	բազային տուրքի 300-ապատիկի չափով
ը.	Օտարերկրյա ավիացիոն ուսումնական հաստատության <u>կազմակերպության</u> ճանաչման համար	
	ընդհանուր հիմունքներով	բազային տուրքի 400-ապատիկի չափով
	ավտոմատ կերպով	բազային տուրքի 100-ապատիկի չափով
թ.	ճանաչված օտարերկրյա ավիացիոն ուսումնական հաստատության <u>կազմակերպության</u> պահպանության համար՝ տարեկան	բազային տուրքի 50-ապատիկի չափով

ժ.	հայտարարագրված ավիացիոն ուսումնական հաստատության կազմակերպության ուսումնասիրության և հայտարարագրի հաստատման համար	բազային տուրքի 130-ապատիկի չափով
ժա.	հայտարարագրված ավիացիոն ուսումնական հաստատության կազմակերպության հայտարարագրի պահպանման համար՝ տարեկան	բազային տուրքի 30-ապատիկի չափով
11)	Ավիացիոն բժշկական հաստատության սերտիֆիկացում	
ա.	ավիացիոն բժշկական հաստատության սերտիֆիկատի տրամադրման համար	բազային տուրքի 400-ապատիկի չափով
բ.	ավիացիոն բժշկական հաստատության սերտիֆիկատի պահպանության համար՝ տարեկան	բազային տուրքի 150-ապատիկի չափով
գ.	ավիացիոն բժշկական փորձագետի համապատասխանության վկայականի տրամադրման համար	բազային տուրքի 50-ապատիկի չափով
դ.	ավիացիոն բժշկական փորձագետի համապատասխանության վկայականի գործողության ժամկետի երկարաձգման համար	բազային տուրքի 20-ապատիկի չափով
12)	Հայաստանի Հանրապետության տարածքում օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվությունների տրամադրման համար	
ա.	Օդանավ շահագործողի վկայականի տրամադրման համար	
	5700 կգ և ավել կամ 19 ուղևորից ավելի օդանավերի դեպքում	բազային տուրքի 5000 թ -ապատիկի չափով
	մինչև 5700 կգ կամ 19 ուղևորից պակաս օդանավերի դեպքում	բազային տուրքի 500 թ -ապատիկի չափով
	օդանավի քանակի ավելացմամբ պայմանավորված օդանավ	բազային տուրքի

	շահագործողի վկայականին կից շահագործման հատուկ դրույթների փոփոխության կամ նոր շահագործման հատուկ դրույթների տրամադրման համար	800-ապատիկի չափով
	օդանավ շահագործողի վկայականի տրամադրման համար հաստատման ենթակա փաստաթղթերի փոփոխությունների գնահատման և հաստատման համար	բազային տուրքի 350-ապատիկի չափով
	օդանավ շահագործողի վկայական տալու համար հիմք հանդիսացած պայմանների վրա հնարավոր ազդեցություն ունեցող և նախնական հաստատում պահանջող փոփոխությունների գնահատման և հաստատման համար	բազային տուրքի 200-ապատիկի չափով
	օդանավ շահագործողի վկայականի պահպանության համար՝ տարեկան	բազային տուրքի 2500-ապատիկի չափով
բ.	կանոնավոր առևտրային օդային փոխադրումների իրականացման հավաստագրի տրամադրման համար	բազային տուրքի 5000-ապատիկի չափով
գ.	կանոնավոր առևտրային օդային փոխադրումների իրականացման հավաստագրի փոփոխության համար	բազային տուրքի 1000-ապատիկի չափով
դ.	կանոնավոր առևտրային օդային փոխադրումների իրականացման հավաստագրի պահպանության համար՝ տարեկան	բազային տուրքի 800-ապատիկի չափով
ե.	Հայաստանի Հանրապետության օդանավ շահագործողների կողմից Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություններ տալու	
	Երկու և ավել ոչ կանոնավոր օդային հաղորդակցության դեպքում	բազային տուրքի 15-ապատիկի չափով

	մեկանգամյա ոչ կանոնավոր օդային հաղորդակցության դեպքում	բազային տուրքի 5-ապատիկի չափով
գ.	Օտարերկրյա օդանավ շահագործողների կողմից Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություններ տալու	
	կանոնավոր օդային հաղորդակցության դեպքում	բազային տուրքի 30-ապատիկի չափով
	երկու և ավել ոչ կանոնավոր օդային հաղորդակցության դեպքում	բազային տուրքի 15-ապատիկի չափով
	մեկանգամյա ոչ կանոնավոր օդային հաղորդակցության դեպքում	բազային տուրքի 50-ապատիկի չափով
է.	Հայաստանի Հանրապետությունում ուսումնական և հատուկ բնույթի թռիչքների իրականացման թույլտվության տրամադրման համար	
	անօդաչու թռչող համակարգերի դեպքում	բազային տուրքի 2-ապատիկի չափով
	ընդհանուր նշանակության ավիացիայի օդանավերի դեպքում	բազային տուրքի 5-ապատիկի չափով
	Հայաստանի Հանրապետությունում ուսումնական բնույթի թռիչքների իրականացման մեկանգամյա թույլտվության տրամադրման համար	բազային տուրքի 2-ապատիկի չափով
	Հայաստանի Հանրապետությունում ուսումնական բնույթի թռիչքների իրականացման տարեկան թույլտվության տրամադրման համար	բազային տուրքի 200-ապատիկի չափով
13)	Թռիչքային և սրահի անձնակազմի անդամների վկայագրման համար	
ա.	կոմերցիոն օդաչուի վկայականի (CPL) քննության համար	բազային տուրքի 50-ապատիկի չափով
	կոմերցիոն օդաչուի վկայական (CPL) տալու համար	բազային տուրքի

		250-ապատիկի չափով
	կոմերցիոն օդաչուի վկայականի գործողության ժամկետի երկարաձգման համար	բազային տուրքի 100-ապատիկի չափով
բ.	օտարերկրյա կոմերցիոն օդաչուի վկայականի ճանաչման համար	բազային տուրքի 80- ապատիկի չափով
գ.	սիրողական օդաչուի վկայական (PPL) տալու համար	բազային տուրքի 150-ապատիկի չափով
դ.	սիրողական օդաչուի վկայականի գործողության ժամկետի երկարաձգման համար	բազային տուրքի 50- ապատիկի չափով
ե.	օտարերկրյա սիրողական օդաչուի վկայականի ճանաչման համար	բազային տուրքի 50- ապատիկի չափով
զ.	գծային օդաչուի վկայականի քննության համար	բազային տուրքի 50- ապատիկի չափով
	գծային օդաչուի վկայական տալու համար	բազային տուրքի 350-ապատիկի չափով
է.	գծային օդաչուի վկայականի գործողության ժամկետի երկարաձգման համար	բազային տուրքի 200-ապատիկի չափով
ը.	օտարերկրյա գծային օդաչուի վկայականի ճանաչման <u>նպատակով</u> <u>տեսական գիտելիքների թեստավորման քննության</u> համար	բազային տուրքի 20- ապատիկի չափով
<u>թ. 13.9.1</u>	օտարերկրյա գծային օդաչուի վկայականի ճանաչման համար	բազային տուրքի 100-ապատիկի չափով

Ժ.թ.	շտուրմանի վկայական տալու համար	բազային տուրքի 100-ապատիկի չափով
Ժ.ա.	շտուրմանի վկայականի գործողության ժամկետի երկարաձգման համար	բազային տուրքի 50-ապատիկի չափով
Ժ.բ.	օտարերկրյա շտուրմանի վկայականի ճանաչման համար	բազային տուրքի 30-ապատիկի չափով
Ժ.գ.	բորտինժենների վկայականի տալու համար	բազային տուրքի 100-ապատիկի չափով
Ժ.դ.	բորտինժենների վկայականի գործողության ժամկետի երկարաձգման համար	բազային տուրքի 50-ապատիկի չափով
Ժ.ե.	օտարերկրյա բորտինժենների վկայականի ճանաչման համար	բազային տուրքի 30-ապատիկի չափով
Ժ.զ.	բորտօպերատորի և բորտուղեկցորդի վկայական տալու համար	բազային տուրքի 75-ապատիկի չափով
Ժ.է.	բորտօպերատորի և բորտուղեկցորդի վկայականի գործողության ժամկետի երկարաձգման համար	բազային տուրքի 40-ապատիկի չափով
Ժ.ը.	օտարերկրյա բորտօպերատորի և բորտուղեկցորդի վկայականի ճանաչման համար	բազային տուրքի 50-ապատիկի չափով
Ժ.թ.	օդապարիկի օդաչուի վկայական տալու համար	բազային տուրքի 80-ապատիկի չափով
Ժ.ժ.	<u>ազատ</u> օդապարիկի օդաչուի վկայականի գործողության ժամկետի երկարաձգման համար	բազային տուրքի 40-ապատիկի չափով
Ժ.Ճ.	<u>ազատ</u> օտարերկրյա օդապարիկի օդաչուի վկայականի ճանաչման համար	բազային տուրքի 20-ապատիկի չափով
Ժ.Դ.	օդաչուի վկայականում հրահանգչի որակավորման տրամադրման	բազային տուրքի

	համար	100-ապատիկի չափով
ԺԺԳԲ.	օդաչուի վկայականում հրահանգչի որակավորման գործունեության ժամկետի երկարաձգման համար	բազային տուրքի 50- ապատիկի չափով
ԺԺԴԳ.	օտարերկրյա հրահանգիչ օդաչուի վկայականի ճանաչման համար	բազային տուրքի 100-ապատիկի չափով
ԺԺԵԳ.	քննող օդաչուի վկայականի քննության համար	բազային տուրքի 50- ապատիկի չափով
	քննող օդաչուի վկայական տալու համար	բազային տուրքի 200-ապատիկի չափով
ԺԺԶԳ.	քննող օդաչուի վկայականի գործողության ժամկետի երկարաձգման համար	բազային տուրքի 200-ապատիկի չափով
ԺԺԷԳ.	օտարերկրյա քննող օդաչուի վկայականի ճանաչման <u>նպատակով</u> <u>տեսական գիտելիքների թեստավորման քննության</u> համար	բազային տուրքի 30- ապատիկի չափով
ԺԺԸԳ"	օտարերկրյա քննող օդաչուի վկայական տալու համար	բազային տուրքի 120-ապատիկի չափով
ԺԺՐԳ.	թռիչքային և սրահի անձնակազմի անդամի վկայականի կրկնօրինակ տալու համար	բազային տուրքի 50- ապատիկի չափով

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից,
իսկ գործող շահառուների կողմից սերտիֆիկատի, թույլտվության կամ այլ
հաստատման պահպանության համար տարեկան տուրքի վճարումը սույն օրենքի

ուժի մեջ մտնելու տարվա համար վճարվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելու տարվա մինչև մայիսի 1-ը: պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԱՎԻԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Նախագծի ընդունման անհրաժեշտությունը և նպատակը

Քաղաքացիական ավիացիայի կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) «Ավիացիայի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն հանդիսանում է օդային տրանսպորտի բնագավառի **կանոնակարգման**, քաղաքացիական ավիացիայի և ոչ ռազմական պետական ավիացիայի գործունեության, օդային երթևեկության սպասարկման, ավիացիոն անվտանգության, թռիչքային անվտանգության, ինչպես նաև ավիացիայի բնագավառում շահագործվող վերգետնյա միջոցների և մատուցվող ծառայությունների ապահովության ու անվտանգության **կանոնակարգման**, ավիացիոն ծառայությունների և Հայաստանի Հանրապետությունում գործող ավիացիոն ենթակառուցվածքների **վերահսկողության** իրականացման ոլորտում:

Կոմիտեն կանոնակարգման և վերահսկողության գործառույթների հետ մեկտեղ Օրենքի համաձայն ներկայումս մատուցում է մի շարք ծառայություններ, որոնց համար, սակայն, չեն գանձվում պետական տուրք կամ վճար:

Այս առնչությամբ Կոմիտեի կողմից ուսումնասիրվել է միջազգային փորձը, որը ցույց է տվել, որ աշխարհի մի շարք երկրներում ավիացիոն իշխանությունների կողմից համանման ծառայությունները մատուցվում են վճարովի հիմունքներով: Մասնավորապես ուսումնասիրվել են Վրաստանի, Լատվիայի, Սինգապուրի և մի շարք այլ երկրների փորձը:

«Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով ներկայացված ծառայությունների համար տուրքի չափը հաշվարկվել է մարդ/ժամ սկզբունքով՝ հաշվի առնելով ներկայումս նշված ծառայության համար ծախսվող փաստացի աշխատաժամանակը, օգտագործվող ռեսուրսները, ծառայության բնույթը և միջազգային պրակտիկայում գործող վճարների համադրումները:

«Ավիացիայի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով նախատեսվում է ավիացիայի բնագավառում մատուցվող ծառայությունների համար գանձել պետական տուրք:

2. Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման արդյունքում Կոմիտեի կողմից մատուցվող ծառայությունների համար կսահմանվի պետական տուրք, որը կնպաստի ավիացիայի բնագավառում ֆինանսապես կայուն ընկերությունների ներգրավմանը: Այդ հանգամանքը որոշ չափով կխթանի ավիացիոն ծառայությունների որակի բարելավմանը, ինչպես նաև տվյալ ոլորտից օգտվողների շահերի ապահովմանը:

3. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ.

Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. Ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ.

Նախագծի մշակումը չի բխում որևէ ռազմավարական փաստաթղթից:

4. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում սպասվելիք փոփոխությունները

Օրենքների նախագծերի ընդունմամբ պետական բյուջեի եկամուտները կավելանան տարեկան մոտ 150 մլն դրամով:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
 ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԱՎԻԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
 ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-721-27.11.2023-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ**

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական գեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	«Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	«Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ նաեւ՝ Նախագիծ) 1-ին հոդվածից առաջարկում ենք հանել «(այսուհետ՝ Օրենք)» ձեակերպումը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Նախագծում «Պետական տուրքի մասին» օրենքին այլեւս հղում չի կատարվում:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն՝ Նախագծի 1-ին հոդվածից հանվել է «(այսուհետ՝ Օրենք)» ձեակերպումը:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասով Օրենքում լրացվող նոր 20.3-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ	Հիմք ընդունելով «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1,1-ին կետի 6-րդ ենթակետը՝ նախարարը հաստատում է Հայաստանի Հանրապետությունում ավիացիոն ուսումնական կազմակերպությունների սերտիֆիկացման և օտարերկրյա ավիացիոն	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

		կետի «ա», «բ», «է», «ը», «թ», «ժ», «ժա» ենթակետեր	կազմակերպությունների սերտիֆիկատների հաստատման կարգը, ինչպես նաև ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով, Օրենքի գործող պահանջի համապատասխանության ապահովման նպատակով առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասով Օրենքում լրացվող նոր 20.3-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետում և դրա ենթակետերում «հաստատությունների» բառը փոխարինել «կազմակերպությունների» բառով, իսկ «վկայականի» բառը՝ «սերտիֆիկատի» բառով:		
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածով՝ Օրենքի նոր լրացվող 20.3-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի «ա» ենթակետ	Նախագծի 1-ին հոդվածով՝ Օրենքի նոր լրացվող 20.3-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի «ա» ենթակետում տեղի է ունեցել վրիպակ: Հաշվի առնելով վերոնշյալը առաջարկում ենք «50000-ապատիկի» թիվը փոխարինել «5000-ապատիկի» թվով, իսկ «5000-ապատիկի» թիվը փոխարինել «500-ապատիկի» թվով:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
4.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասով Օրենքում լրացվող նոր	Հիմք ընդունելով Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 21.07.2021թ. N 2-Ն հրամանի պահանջները՝ առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասով	Ընդունվել է: Նախագծում կատարվել է փոփոխություն	Ընդունվել է:

		20.3-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետ «ը» և «ԺԺ» ենթակետեր	Օրենքում լրացվող նոր 20.3-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի «ը» և «ԺԺ» ենթակետերում «ճանաչման քննության համար» ձևակերպումը փոխարինել «ճանաչման նպատակով տեսական գիտելիքների թեստավորման համար» ձևակերպմամբ:	Նախագիծը համապատասխանեցվել է Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 21.07.2021թ. N 2-Ն հրամանի պահանջներին:	
5.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածով՝ «Պետական տուրքի մասին» օրենքում նոր լրացվող 20.3-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետ	Նախագծի 1-ին հոդվածով՝ «Պետական տուրքի մասին» օրենքում (այսուհետ՝ Օրենք) նոր լրացվող 20.3-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի «ը» ենթակետին հաջորդում է «13.9.1» կետը, առաջարկում ենք ապահովել Նախագծի 1-ին հոդվածով Օրենքում նոր լրացվող 20.3-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համարակալման հաջորդականությունը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասը, համաձայն որի՝ «Օրենսդրական ակտի հոդվածները, մասերը եւ կետերը համարակալվում են արաբական թվանշաններով: Հոդվածում ենթակետերը համարակալվում են հայերենի այբուբենի փոքրատառերով: Հոդվածների եւ մասերի համարները տեքստից բաժանվում են միջակետերով, իսկ հոդվածների կետերի համարները՝ փակագծերով: Հոդվածում ենթակետի՝ հայերենի այբուբենի փոքրատառերով նշված համարները տեքստից	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն՝ օրենքում նոր լրացվող 20.3-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի «ը» ենթակետին հաջորդող «13.9.1» կետի համարակալումը փոփոխվել է՝ ապահովելով Նախագծի 1-ին հոդվածով Օրենքում նոր լրացվող 20.3-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համարակալման հաջորդականությունը:	Ընդունվել է:

			բաժանվում են միջակետով:»:		
6.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասով Օրենքում լրացվող նոր 20.3-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի «ժթ» և «ԺԺ» ենթակետեր	Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2023 թվականի հունիսի 14-ի թիվ 06-Ն հրամանի Հավելվածի 1-ի 6-րդ կետի 1-ին ենթակետի ա. պարբերությունում կիրառվող ձևակերպումները առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասով Օրենքում լրացվող նոր 20.3-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի ժթ. և ժԺ. ենթակետերի «օդապարիկի» բառից առաջ լրացնել «ազատ» բառը:	Ընդունվել է: Նախագծի նշված ենթակետերում «օդապարիկի» բառից առաջ լրացվել է «ազատ» բառը՝ համապատասխանեցնելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2023 թվականի հունիսի 14-ի թիվ 06-Ն հրամանին:	Ընդունվել է:
7.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածով՝ Օրենքի նոր լրացվող 20.3-րդ հոդվածի 2-րդ հոդված	Նախագծի 1-ին հոդվածով՝ Օրենքի նոր լրացվող 20.3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ «Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ) միջազգային ստանդարտներով սահմանված ճշգրիտ վայրէջքի համար II/III կարգախմբով վազքուղու ատրոդրոմի սերտիֆիկատի (այսուհետ՝ սերտիֆիկատ) պահպանության համար՝ գանձվում է պետական տուրք տարեկան բազային տուրքի 500-ապատիկի չափով»: Օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ	Ընդունվել է: Նախագծի 2-րդ հոդվածով սահմանվել է գործող շահառուների կողմից տարեկան պահպանության համար պետական տուրքի վճարման ժամկետ:	Ընդունվել է:

		<p>պարբերության համաձայն՝ «Սույն օրենքով սահմանված տարեկան հերթական պետական տուրքի վճարումը յուրաքանչյուր առաջիկա տարվա համար կատարվում է մինչև առաջիկա տարին սկսելը՝ լիազոր մարմնի կողմից տարեկան պետական տուրքի գանձման օբյեկտ հանդիսացող ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման արդյունքում փաստաթղթերի (իրավունքների, թույլտվությունների, արտոնագրերի, լիցենզիաների, որակավորման վկայականների) վրա նշված փաստաթղթերի (իրավունքների, թույլտվությունների, արտոնագրերի, լիցենզիաների, որակավորման վկայականների) տրման կամ օրենքով սահմանված դեպքերում գործունեության որոշ տեսակներ իրականացնելու վերաբերյալ ծանուցում ներկայացրած անձանց հաշվառման ամսաթվից ոչ ուշ»:</p> <p>Վերոգրյալից ելնելով ստացվում է, որ սերտիֆիկատի պահպանության համար նախատեսված պետական տուրքի տարեկան վճարումը յուրաքանչյուր առաջիկա տարվա համար պետք է կատարվի մինչև առաջիկա տարին սկսելը:</p> <p>Հարկ է նկատել, որ Նախագծում</p>		
--	--	--	--	--

			<p>բացակայում են անցումային դրույթներ ավիացիայի բնագավառում մատուցվող ծառայությունների՝ սերտիֆիկատի պահպանության համար առաջին տարվա տարեկան պետական տուրքը վճարելու կարգի եւ ժամկետների վերաբերյալ: Անցումային դրույթի բացակայության պայմաններում վերոնշյալ սերտիֆիկատի պահպանության համար պետական տուրքի տվյալ տարվա վճարումը հնարավոր չի լինի կատարել Օրենքով նախատեսված ժամկետում, քանի որ տվյալ տարվա պետական տուրքի վճարման Օրենքով նախատեսված ժամկետը, այն է՝ մինչեւ առաջիկա տարին սկսելը, վրա հասած կլինի: Այս դեպքում առաջարկում ենք ուժի մեջ մտնելու տարվա համար սահմանել այդ տարվա սերտիֆիկատի պահպանման համար տարեկան պետական տուրքի վճարման Օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ պարբերությամբ սահմանված ժամկետից տարբերվող ժամկետ:</p> <p>Նույն դիտարկումը վերաբերում է նաև Նախագծով նախատեսված մնացյալ պետական տուրքի տարեկան վճարումներին:</p>		
8.	ՀՀ կառավարություն	«Պետական տուրքի մասին» օրենքում	Նախագծի 2-րդ հոդվածի համաձայն՝ «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո»: Ինչից	Ընդունվել է: Երկու նախագծերում էլ ուժի մեջ մտնելու	Ընդունվել է:

		<p>լրացում կատարելու մասին» և «Ավիացիայի մասին օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի 2-րդ հոդված</p>	<p>բխում է, որ Նախագծով սահմանված բոլոր կարգավորումների ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանված է պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:</p> <p>Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Օրենսգրքով նոր տեսակի հարկի կամ վճարի սահմանում, հարկի կամ Օրենսգրքով սահմանված վճարի դրույքաչափի բարձրացում նախատեսող Հայաստանի Հանրապետության օրենքները կամ Հայաստանի Հանրապետության օրենքների նման դրույթները կարող են ուժի մեջ մտնել այդ օրենքների ընդունման օրը ներառող հարկային տարվան հաջորդող հարկային տարվա սկզբից, բայց ոչ շուտ, քան այդ օրենքների պաշտոնական հրապարակման օրը ներառող ամսվան հաջորդող յոթերորդ ամսվա սկզբից:»:</p> <p>Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 7-րդ հոդվածում սահմանված են վճարի տեսակները, որի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են՝</p> <ol style="list-style-type: none"> 1) պետական վճարներ, որոնց տեսակներն են՝ ա. պետական տուրքը, 	<p>ժամկետը սահմանվել է 2025 թվականի հունվարի 1-ը՝ համապատասխանեցնելով ՀՀ հարկային օրենսգրքի պահանջներին:</p>	
--	--	--	---	--	--

			<p>(...)»:</p> <p>Նախագծով սահմանվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով նախատեսված վճար՝ պետական տուրք, ավիացիայի քնագավառի մի շարք ծառայությունների համար: Այդպիսի դրույթները կարող են ուժի մեջ մտնել այդ օրենքների ընդունման օրը ներառող հարկային տարվան հաջորդող հարկային տարվա սկզբից: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարող ենք փաստել, որ Նախագիծը կարող է ուժի մեջ մտնել օրենքի ընդունման օրը ներառող հարկային տարվան՝ 2024 թվականին, հաջորդող հարկային տարվա՝ 2025 թվականի սկզբից: Մինչդեռ «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածում քննարկվող Նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետը սահմանված է պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո: Հիմք ընդունելով վերոգրյալն՝ առաջարկում ենք վերանայել Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված ժամկետը՝ համապատասխանեցնելով այն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով նախատեսված դրույթների ընդունման համար օրենսդրությամբ սահմանված</p>		
--	--	--	---	--	--

			<p>ժամկետներին: Ըստ այդմ նախագծի 2-րդ հոդվածում «պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո» բառերը փոխարինվել են «2025 թվականի հունվարի 1-ից, իսկ գործող շահառուների կողմից սերտիֆիկատի, թույլտվության կամ այլ հաստատման պահպանության համար տարեկան տուրքի վճարումը սույն օրենքի ուժի մեջ մտնելու տարվա համար վճարվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելու տարվա մինչև մայիսի 1-ը» բառերով:</p>		
--	--	--	--	--	--